

## ՅԱԿՈԲ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ԴՄԻԱՆԱՆՔԸ

Մինչ Յակոբ Կաթողիկոս կը պաշտպանէ իր Աթոռին իրաւունքները ընդդէմ Եղիազարի եւ հետամուտ կ'ըլլայ ազատուելու պարագերու ծանր ու տաղտկալի հոգէն, կը ստիպուի միջամուխ ըլլալ նաեւ Լեհաստանի գործերուն:

Կաթողիկոսին միջամտութեան նպատակն ու տարողութիւնը լաւ ըմբռնելու համար, հարկ է դանագանել Հայրապետիս դաւանական ըմբռնումներն ու անոր նախանձախնդրութիւնը հանդէպ հայ ծէսին, աւանդութեանց եւ բարեկարգական օրէնքներուն:

Նախ ընդհանուր կերպով լսելու է՝ թէ լատին քարոզիչները՝ Յակոբ Զուղայեցիի դահակալութեամբ բարելաւում կը յուսային իրենց եւ Էջմիածնի փոխ-յարաբերութեանց մէջ: Եղբայր Դիոնեսիոս 1655 Յունուար 15ին կը գրէ. «Իրենց հերձուածող վարդապետներէն խարուած՝ (հայերը) ամէն ատենէ աւելի հակահրանք ցոյց կուտան (կաթողիկէութեան դէմ): Սակայն իրենց Փիլիպպոս Պատրիարքը մեռած է, եւ նոր մը կարգած են, Յակոբ անուն, որմէ